

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարազգայնացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ա մեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաւաւորչի բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Մի նշանաւոր խնդիր.— Ներքին տեսու-
թիւն: Մի նկատողութիւն: Նամակ Բագուից:
—Արտաքին տեսութիւն: «Մասիս» թղթ-
թակցութիւն: «Մշակ» հեռագիրներ: Յայտա-
րարութիւններ: Տեղեկացոյց, — Բանասիրա-
կան: Հայ կիներ:

ՄԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մեր կովկասեան և անդրկով-
կասեան բէալական ուսումնարան-
ների մէջ աւարտող աշակերտները
իւրաքանչիւր տարի մեծ բազմու-
թեամբ գնում են Ռուսաստան,
որպէս զի ընդունվին զանազան
տեխնիկական բարձրագոյն դպ-
րոցները: Բայց աւարտողների
թիւը շատ է, իսկ յիշեալ դպ-
րոցներում վաւեր սիւսերի
թիւը փոքր է, այնպէս որ մեր
երիտասարդութեան մեծ մասը
մնում են ընդունված: Այսուհի-
տե նրանք չը գիտեն ինչ անեն,
մոլորված են մնում....

Բէալական դպրոցներում ա-
ւարտածները կարող են ընդուն-
ված լինել միմյան մասնագի-
տական բարձրագոյն դպրոցնե-
րում կամ զինուորական դպրոց-
ներում, իսկ լատինական և յու-
նական լեզուները չը գիտենալով,

չեն կարող ընդունված լինել հա-
մալսարանում և բժշկական ակա-
դէմիայում:

Ներակայեցեք ձեզ երիտա-
սարդների դրութիւնը, որոնք ան-
դրկովկասեան և կովկասեան բէա-
լական ուսումնարաններում իրանց
ուսման ընթացքը աւարտելով,
թողնում են իրանց երկիրը, գը-
նում են մի քանի հազար վերստ
հեռու բարձրագոյն ուսումը շա-
րունակելու համար,—բայց չափից
զուրս բազմութիւն լինելով, նրանց
մեծ մասը չէ ընդունվում և նը-
րանք կամ պէտք է նորից վերա-
դառնան իրանց ծնողների մօտ
կրկին մի ահալին ճանապարհոր-
դութիւն անելով, կամ պէտք է
անգործ մնան Ս. Պետերբուրգում
և Մոսկվայում:

Կովկասի և Անդրկովկասի այդ
բացառական դրութիւնը աչքի
առաջն ունելով, որտեղ չը կայ
մեր երիտասարդութեան համար
ոչ մի բարձրագոյն դպրոց, մեզ
ցանկանալ է տալիս, որ տէրու-
թիւնը այդ բացառական դրու-
թիւնը ի նկատի առնելով, հետե-
ւեալ բարեբարութիւնն անէր մեր
երկրին, այն է թոյլ տալ որ
Կովկասեան և Անդրկովկասեան

բէալական դպրոցներում աւարտա-
ծ երիտասարդութիւնը, բացի մաս-
նագիտական բարձրագոյն դպրոց-
ներում, ընդունվէր և մեր համալ-
սարանների բնագիտական միութե-
մատիկական ֆակուլտետում, բը-
ժշկական ֆակուլտետում և բժշ-
կական ակադէմիայում:

Այսքանը արդէն բաւական կը
լինէր մեր երիտասարդութեանը
ուսման ճանապարհը բաց անելու
համար, մինչև որ մեր երկրում
չը կայ ոչ մի բարձրագոյն դպրոց:
Բժշկական ակադէմիայի պրո-
ֆէսորները նորերում իրանք յայ-
տնեցին, որ ակադէմիա մտնող-
ների համար անհրաժեշտ չեն
համարում լատինական և յունա-
կան լեզուների հմտութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մեծ պատի երրորդ շաբաթից սկսած Թիֆ-
լիսի Կրթօթում սկսվեցան հրապարակական
դասախօսութիւններ: Մենք առիթ ունեցանք
լսել ամբիօնի բարձրութեանց Թիֆլիսի հա-
սարակութեան ծանօթ դասախօսներին՝ Երի-
ցով և Պալմ պարոններին, և մեր հասարա-
կութեանը անծանօթ օրիորդ Նլեբովային,
որ Ա. Պետերբուրգից է եկել, որտեղ նա իր

ուսման ընթացքը աւարտել է Մանկավար-
ժական կուրսերում: Նա ունեցաւ կատարեալ
աջողութիւն. դահլէճը բացառապէս լի էր,
մինչև անգամ շատերը տեղ չը գտնելով կանգ-
նած էին մնացել անցքերում: Դասախօս օ-
րիորդը իր ընթերցանութեան ամբողջ ըն-
թացքի ժամանակ տիրապետում էր հասա-
րակութեան վրա, գրաւած ունէր հասարա-
կութեան լարված ուշադրութիւնը: Անպա-
սելի կերպով այդ նորահաս և համակրելի
օրիորդը բոլորովին չը շփոթեցաւ ամբիօնի
վրա բարձրանալով, կանգնելով դէմ առ դէմ
իրան անծանօթ հասարակութեան: Դասա-
խօսութիւնը կարգացվեցաւ հասարակ օժով,
առանց որ և է չափազանցութեան, հասա-
րակ և զեղեցիկ ձևով: Դասախօս օրիորդը
բոլորովին չէր դիմում տետրակին, որ այդ-
քան անսխալ է լինում, այլ խօսում էր
հաւասար և յաջորդաբար կերպով այն, ինչ
որ ինքն կատարելապէս իրացրել էր: Խօսակ-
ցութեան բովանդակութիւնը մայրենի լեզուի
դասախօսութիւնն էր և ժողովրդական դպ-
րոցի կազմակերպութիւնը: Դասախօսութեան
դասաւորութիւնը կատարելապէս սխալմա-
կան էր, դրութիւնները պարզ ապացուցված
էին, պատմական տեսութիւնը դասաւորու-
թեան մեթոդների իրանց յաջորդական կար-
գաւորութեան մէջ, անպարսպելի էր: Եւ
դասախօս օրիորդը վարձաւորվեցաւ միաձայն
ծափահարութիւններով, որոնց չարժանացաւ
դասախօսներից ոչ մէկը: Ամբողջ հասարա-
կութիւնը զուրս եկաւ դահլէճից հաճելի
ուպաւորութեան տակ:

Ձեռք կարող չը համակրել օրիորդին, որ
այդքան հեռուից Կովկաս է եկել, դասա-
ւորութեամբ իր ապրուստը պահպանելու հա-
մար: Բացի նրանից որ դասախօսութեան
արդիւնքի մի մաս նրան իր պատկանի, օրիոր-
դը այդ իր աջողութեամբ աւելի հեշտու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԻՆԵՐ

«Կինը է այն առանցքը, որի շուրջը
պտտւում է քաղաքակրթութիւնը»:

Բայց մայրը, ինչ վարքի տէր և լինէր նա,
զարձեալ աշխատում է աղջկայ սանձը իր ձեռ-
քում պահել: Ոչինչ օրինակ այնքան կորստա-
բեր լինել կարող չէ, քան թէ այն, որ մարդ
կորստում է ուրիշին այն առաքելութիւնները,
որ ինքը չէ կատարում: Այստեղից առաջ է գա-
լիս մօր և աղջկայ մէջ յարաբերութիւնների
մի կեղծ խորագաւաճ, որով միւր միւսին խա-
բում է: Բայց աղջկիւր աւելի վարպետ է լինում:
Կարողից զուրս բերելէն յետոյ, աշխատում
են աղջկան շուտով մարդու տալ: Օժիտի քա-
նակութիւնը առաջից հրատարակվում է, թէ
քանի հազար է. նրա համաձայն որոշում են փե-
սայ: Մայրը սկսում է այնուհետև աղջկան ցոյց
տալ աշխարհին. այցելութիւններ են անում,
տանում է նրան բալ, թատրոն, (կրթօթ) և

զրանց նման տեղեր: Աղջկիւր միշտ իրան նեղ-
ված է գտնում անկիրթ, անտաշ մօր մօտ, որ
ամեն տեղ հետեւում է նրան, որպէս մի սև ըս-
տուեր, բայց թաղցնում է իր տահաութիւնը:
Հայրը ամենեւին չէ խառնվում գործի մէջ. նա
իրան հեռու է պահում: Դուք չէք տեսնի հա-
րուստ հայրերից մէկին, որ իր աղջկայ հետ ման
գալիս լինէր փողոցում: Այս դէպքում հայր
պահպանել է իր ասիականութիւնը այլև կնոջ
վերաբերութեամբ:

Ամուսնութիւնները լինում են ըստ մեծի մա-
սին հաւասարը հաւասարի հետ (նիւթական
կարողութեան կողմից): Առաջ գերադասում էին
աստիճանը, (մոնդերը), բայց հիմա աստիճա-
նաւորին բանի տեղ չեն դնում, թիկ փող չու-
նի կամ որ և ինչ բարձր դիրք բռնած չէ: Մի
ժամանակ էլ մօղայի մէջ մտան օտարազգի
փեսաները, բայց հիմա նրանք էլ կորցրել են
իրանց վարկը, որովհետև համարեա բոլոր ա-
մուսնութիւնները օտարազգիների հետ անբաղդ
եղան: Փեսան աղջկայ բերած փողը կերաւ և
նրան քաղցած թողեց: Ծնողները սկսեցին ափ-
ստալով ոչ թէ աղջկան, որ մի անպիտանի ձեռքում
մաշվում էր, այլ իրանց տուած փողին: Եւ այս-
պէս, ամուսնութեան մէջ գլխաւոր դերը խա-
ղում է հայիւր և ամուսնական կապը դառնում
է փողը: Ամենեւին չէք տեսնի, որ մի աղջկի,
մի քանի տասն հազար օժիտով, պատկվէր մի
գեղեցիկ և առողջ երիտասարդի հետ, որ միայն
ուսում ունէր, բայց փող կամ պաշտօն չուէր:
Եւ ընդհակառակն, շատ կը տեսնէք այնպիսի
փեսաներ որ ամուսին ընելու ընդունակու-

թիւնը կորցրել էին, որ իրենց կեանքը սպառել
էին վատ կացութեան մէջ, բայց պատկվում են
աղջկաներից ամենագեղեցիկի հետ, որովհետև
փող ունեն: Սէրը ամենեւին զեր չունի այս դա-
սի ամուսնութեան մէջ. և եթէ յայտնվում է
նա, առաջ է բերում այնպիսի մի բռնան, որ
նշ մի քիչ զրկել յարգող բռնանիստ չէր ցանկա-
նայ դրութիւնը, երբ նա միայն փողով պէտք է
իր համար ամուսին գտնէր: Այդ դէպքում նրա
անձնական արժանաւորութիւնները բոլորովին
իրանց նշանակութիւնը կորցնում են: Գուցէ նա
գեղեցիկ էր, գուցէ խելացի էր, և կարող էր
լաւ կին լինել, բայց փեսաները նրա մօտով
անցնում են, կարծես արհամարհելով: Նա մը-
նում է որպէս մի անվաճառ ապրանք, որը
խանութպանի լեզուով կոչվում է (սխալմա-
ղաք): Տարիների հետ նրա բնաւորութիւնը
փոխվում է: Կապիւրը որքան պառւաւում է, այն-
քան չարանում է: Պառւաւ աղջկիւր սեփական
նացնում է մաղձոտ բնաւորութիւն: Նա դառ-
նում է և նախանձոտ, մանաւանդ երբ տես-
նում է, որ վատերը փողով մարդի են գնում:
Մի հարստից, որ կաղ աղջկի ունէր հարցրին.
«Ինչպէս պէտք է մարդու տաս աղջկիւր»:
Նա պատասխանեց. «Յիսուս հազար բութի կը գնեմ
ոտքերի տակը, երկուսն էլ կը դրոստուին»:

Վերջապէս աղջկիւր մարդի է գնում: Կին լի-
նելուց յետոյ սկսվում է նոր կեանք: Առաջին
*) Փաստանշայ նշանակում է ցած մնացած
կամ յետ ընկած:

ամիսներից յետոյ անցնում է և ամուսնական
սիրոյ առաջին ջիւղութիւնը: Այնուհետև սառ-
նութիւնը աննկատելի կերպով մէջ է մտնում:
Այր և կնոջ յարաբերութիւնները պաշտօնական
ձև են ընդունում: Կէպերը առաջ են բերում
սոսկալի պայթումը: Յետոյ սկսվում է ընտա-
նական դժուրը: Եւ այդ ծագում է խիստ բնա-
կան կերպով: Ամուսին այրը ունի իր պարագ-
մունքը, իր արտաքին բարեկամները և բարե-
կամուհիքը. նա ունի իր առանձին զուարճու-
թիւնները, գնում է կուրս և ուրիշ այսպիսի
տեղեր: Նա այնքան զբաղված է լինում իրմով,
որ համարեա մոռանում է, թէ կին ունի: Կինն
էլ իր կողմից պէտք է իր համար մի կեանք
տնօրինէ: Այս բանի մէջ նրան առաջնորդում է
մօր օրինակը: Նա անում է այն, ինչ որ տե-
սել ու սովորել է մօրից:—Այցելութիւններ է
անում, զրօսանքի է գնում, տանը երեկոյթներ է
սարքում, թրե և գալիս մազապիւններում, զբաղ-
վում է աւելի իր պլաններով, քան թէ զա-
ւակներով, իսկ տնտեսութիւնը մնում է աւա-
զակ ծառաների և աղախիւնների կամքին: Ամա-
ւը անց է կացնում ամառանոցում, իսկ ձմեռը
սկսվում է մի և նոյն դարձակ կեանքով: Տարի-
ները անցնում են միմեանց ետևից, միօրինակ
և աննպատակ զուարճութիւնները սաստիկ յոգ-
նեցնում են նրան: Այլ ևս ինչ անէ. ամեն բան
փորձել, ամեն բան մաշել է նա: Վերջին տա-
րիներում սովորութեան մէջ մտաւ արտապա-
մանը. կնիկները սկսեցին ձգել ամուսիններին և
հեռու օտարութեան մէջ թաղցնել իրանց ամօթը:
Այս բոլորի մէջ ևս մեղադրում եմ աղամարդին,

Թեամբ կարող է դասեր ստանալ մեր քաղաքում, որովհետև իր դասախոսութեամբ առանձն ստացաւ մեր հասարակութեան մէջ, Սենք թիչ ասացինք օրիորդ Գլեբովայի դասախոսութեան պարտականութեան մասին, բայց մենք զխտաւորութիւն ունենինք առանձին յօդուածով ծանօթացնել հասարակութիւնը նրա կարգացածի բովանդակութեան հետ, երբ նրա երկրորդ դասախոսութիւն էլ վերջացած կը լինի:

Օր. Բ.—եան

ՆԱԽԱԿ ԲԱՐՈՒՆԻՑ

10-ին մարտի

Հերոս ամառը մի քանի երկտասարդներ «Մարդասիրական ընկերութեան» խորհուրդին մի խնդիր մատուցին, որից պէտք եմ համարում համառօտ քաղաքացիներին անել այժմ. «Գրեթէ իւրաքանչիւր օր ամենայն կողմերից բազմաթիւ հայեր գալիս են և կենտրոնանում այստեղ, սրանք ըստ մեծի մասին մեր երկրասարդ սերունդն են, որոնք Բագուի արդիւնաբեր և առևտրական յաջողակ զիրքից հրապարակած՝ գալիս են գործ գտնելու, նրաթական վաստակ անելու և մարդ դառնալու, ինչպէս ասում են սովորաբար: Հայրենի օջախից հեռացած, մեծաւորների և աղքատների բարեբար աղքեցութիւնից զերկված, այս խեղճ օտարականները, ամենատեսակ բարոյական և մարմնական տանջանքների երկար ժամանակ տանելով, վերջապէս կամ կարողանում են փոքր ի շատ ասորւստ ձեռք բերել, իրանց նրաթական նպատակին հասնել, և կամ ոչ, բայց կենսից խորհուրդը միայն նրաթականի ետևից վազելը չէ, մարդս այլ անհրաժեշտ կարիքներ ևս ունի, որոնք չէ կարող չը լցուցանել՝ առանց անկատար մարդ լինելու... Իայց որոնք կարող են մերոնք հոգևոր սնունդ ձեռք բերել՝ քանի որ արդէն եղած հասարակական ժողովաւորից իրանց կազմակերպութեամբ և ուղղութեամբ անօգուտ և անմատչելի են ժողովրդի բազմութեան համար: Ինչ անէ այստեղ հայ օտարականը, ինչ անէ քանի որ ընթերցանութեան ճաշակ և միջոցներ չունի, քանի որ հասկացող և խնամածու առաջնորդներ ճանապարհ չեն հարթել նորա համար, չունենալով աչքի առաջ ոչ մի ննար՝ նա ստիպված է լինում հագուստների, ուտել-խմելու և խաղերի վրա մտածել, չուայլ և աննպատակ սովորութիւնների հոսանքին ենթարկվել, որի հետևանքները թաքուն չեն իւրաքանչիւր բանիմաց անձից... Բագուի հայերը պէտք է անպատճառ մի կրթողական ժողովաւորի, մի զարգացողից կենտրոն ունենան. և

նա ինքն է առիթ տալիս նրան վատ լինելու: Պատահում են և բախտաւոր ամուսնութիւններ: Տղամարդը զբաղվում է իր գործերով, աշխատում է ընդարձակել իր ասպարէզը: Այնը կառավարում է տունը և նրանից դարձնում է մի փոքրիկ դրամատ: Նրկուսն էլ օգնում են միմեանց, մէկը, որպէս զբոյ մարդ, միւսը որպէս ներքի մարդ: Կենսից ստանում է իր խաղաղ ընթացքով և իր ամեն վայելչութիւններով ջաւակները թուփում են ծնողների բոլորաթիւ մաքուր, առողջ, որպէս հրեշտակներ: Ամեն ինչ դրվում է կարգի և օրինաւորութեան ներքոյ: Ամուսնական ներդաշնակութիւնը լինում է հիմք ընտանիքի բարօրութեան, իսկ բարոյականութիւնը—նրա մէջ տիրող ոգին:

Միշտ այստեղ ինչ որ խօսեցի թիֆլիսի հարուստ կամ բարձր անուանված դասի մասին, վերաբերում էր խոշոր վաճառականներին, նշանաւոր կապալաւորներին, բանկիրներին, կալուածատէրերին, բախտաւորներին սպեկուլատորներին, և առհասարակ այն հասարակութեանը, որ մեծ կարողութեան հետ ունի և մեծամեծ մոլութիւններ: Մնում է մի քանի խօսք ասել աստիճանաւորների կրկնների մասին: Այստեղ ընտանիքային կենսից զտնվում է իր աշխարհութեան տագնապի մէջ. դեռ ևս անձն և անկերպարան է նա: Ոչինչ այնքան անշուք է անարգ չէ լինում, որպէս մի կացութիւն, որ ոչ այս է և ոչ այն: Օտարացումը դառնում է իր տեղը այնպիսիութեան մէջ: Ընտանիքը խլուկով մայրենի բնական հողից, դեռ ևս հաստատ հիմք չէ ձգել օտար հողի

այս կենտրոնը կարող է լինել մի հասարակաց ընթերցարան, որը միշտ մատչելի և բաց լինելով ամենքի համար՝ կարող է իսկապէս մի փոքր կարգի ձեռնարկութիւն հանդիսանալ: Այս առաքինի ձեռնարկութեան սկզբնաւորութիւնը առաւելագոյն պատշաճ է «Մարդաս. ընկերութեան», ուստի խնդրում ենք բարեհաճել խորհուրդից հովանաւորութեան ներքոյ գրել բերել սորա բացումը, որին մենք պատրաստ ենք ի դէպ ժամանակում օգնելու...» Պէտք է ասել, որ այս խնդիրը խորհուրդի ուղղութեան չէ արժանացել մինչև այսօր, այն ինչ կարելիք մեծանում է օրըստօրէ: Մեծ պատի առաջին շարաթից սկսած իւրաքանչիւր օր մարդկանցով լցված մի քանի ֆորդօններ են մշտնապէս այստեղ, որոնք առաւելագոյն Վարաբադի, Տաթևի և Շամախու թեմերիցն են. ոչ միայն չափահասները՝ այլ և 7—10 տարեկան երեխաներ գալիս են անտէր, անհագուստ և անխնամ ամեն կերպ: Միւս կողմիցն էլ ամեն օր Պարսկաստանից մի քանի հարիւր հոգուց բաղկացած խմբեր (պարսիկներ) գալիս են մշտնապէս անելու, և այնքան ճանապարհը ոտով են դալիս: Միանգամայն զարմացած ենք մնացել, այս րոպէին նորիններին կարելի է հազարներով համարել, որոնք ձեռքներին ունեցած կամ պարտք առած մի քանի կօպէկն էլ խաղաղ չէ պրծացրած՝ մնացել են փողոցներում քաղցած թափառելիս և կեղծի ու անտանելի փոշուէջ կորած: Ըր գիտե՞ք ինչ են լսել այս ողորմելիքը, որ տուն տեղ թողած թափվում են այստեղ. վաղ վեր կենողը Բագու է ասում ու վազում: Մանաւոր այժմ, երբ գարունը բերան է և դիւղական աշխատութիւնները սկսվելու են յանկարծ, մի աններելի յանցանք է սրանց վարմունքը. վաղուց այստեղ բնակվող իւրաքանչիւր օտարականի մօտ օրը 10—15 հոգի են գալիս օթևան, ապրում և գործ խնդրելու: Այնքան բազմացել է մարդը, որ կենսից առաջին պիտոյները սաստիկ թանկացել են, տներում ծառաներ և արուեստագործներ մօտ աշակերտներ այլ ևս չեն ուղում. հասարակ օրական մշակութիւնը նոյնպէս պակաս է: Որքան անփորձ և անմեղ երեխաներ պարապ մանգալով՝ ընկնում են մանկատանների ճանկը կամ ծակներում ու գետնափորներում բռն զրած խմիչք ծախողների ուղակի և բարոյագէտ ու ֆիզիկական արատաւորվում, կորչում, ինչքան երկտասարդներ դառնում են ջիւր կտորներ, զոյրեր և անդամներ այն գիշերային խմբերին, որոնք զանազան պատճառներով այստեղ բազմաթիւ են և երեւի իրանց յանգուստ յարձակութիւնով: Նկողներից թէ և յետ դարձողներ ևս շատ են լինում հիւանդութեան կամ ուրիշ պատճառներով, բայց նրանք մնացողների համար մեծ ծախսերի են, մէկն տեղ 10 կամ 20 է գալիս: Գիմար նմանողութիւնը, մի ձեռք նորաձև հագուստով տուն գնալը, փոստով մի քանի ուղիք պարծանքի համար տուն ուղարկելը, իրանց յաջողակ ծանօթների և աղքատների չը կամաւորութիւն, և անհագուստ և երեւի ծուլութիւնն ու յանաւորութիւնն են արեւմտեան յարմարութիւնը: Այս կարգի մարդկանց վերաբերում են զաւառներից թիֆլիսի անդամները, և մասամբ տոնային աղետականները: Իրանք ապրում են այն աստիճան պարզ, համեստ, հասարակ, և մի և նոյն ժամանակ վայելչ կենսիցով, որը չէք տեսնի նոր հարստացած վաճառականներին մէջ: Վերջինները իրանց հարստութեան հետ ունեն մի տեսակ ցուցաբերութիւն, որով աշխատում են միշտ աչքի ընկնել: Նորեւելները առհասարակ քիթը բարձր են պահում: Բայց հին և հիմնաւոր ընտանիքների մէջ, որոնց սովորաբար կուրում են «օջախի որդիք», օրինաւորութիւնը, պատշաճաւորութիւնը աւանդվել է սերունդից սերունդ տոնային գերազանցութեան հետ: Աղջկայ ուսումը այստեղ նոյնպէս ստացվում է մի և նոյն աղբիւրներից, որ սովորում են հարուստ վաճառականների աղջկաները: Բայց որովհետև աղջիկը ընտանիքի մէջ սկզբից փառած չէ, զբաղւոյցը իր աւելի ներգործութեամբ շատ չէ ազդում նրանց վրա: Աւարտելուց յետոյ զարդից թերութիւնները լրացնում են տանը, հրաւիրելով տնային վարժապետ մայրենի լեզուի համար, այլ և օտարերկրեայ լեզուների համար, որպէս են ֆրանսիերէնը և գերմաներէնը: հրաւիրում են և մուգիկայի վարժապետ: Այս տեսակ կրթութիւն ստացած աղջիկը, թէ և այնքան ինքնակամ չէ լինում, որ իր համար փեսայ ընտրել, և պատկանում է ծնողների համաձայնութեամբ, բայց միշտ լաւ կին է լինում: Նրանք

կելը, իրանց յաջողակ ծանօթների և աղքատների չէ մեծացած անխելք չը կամաւորութիւն ու յանաւորութիւն և երեւի ծուլութիւնն ու յանաւորութիւնն են արեւմտեան յարմարութիւնը: Այս կարգի մարդկանց վերաբերում են զաւառներից թիֆլիսի անդամները, և մասամբ տոնային աղետականները: Իրանք ապրում են այն աստիճան պարզ, համեստ, հասարակ, և մի և նոյն ժամանակ վայելչ կենսիցով, որը չէք տեսնի նոր հարստացած վաճառականներին մէջ: Վերջինները իրանց հարստութեան հետ ունեն մի տեսակ ցուցաբերութիւն, որով աշխատում են միշտ աչքի ընկնել: Նորեւելները առհասարակ քիթը բարձր են պահում: Բայց հին և հիմնաւոր ընտանիքների մէջ, որոնց սովորաբար կուրում են «օջախի որդիք», օրինաւորութիւնը, պատշաճաւորութիւնը աւանդվել է սերունդից սերունդ տոնային գերազանցութեան հետ: Աղջկայ ուսումը այստեղ նոյնպէս ստացվում է մի և նոյն աղբիւրներից, որ սովորում են հարուստ վաճառականների աղջկաները: Բայց որովհետև աղջիկը ընտանիքի մէջ սկզբից փառած չէ, զբաղւոյցը իր աւելի ներգործութեամբ շատ չէ ազդում նրանց վրա: Աւարտելուց յետոյ զարդից թերութիւնները լրացնում են տանը, հրաւիրելով տնային վարժապետ մայրենի լեզուի համար, այլ և օտարերկրեայ լեզուների համար, որպէս են ֆրանսիերէնը և գերմաներէնը: հրաւիրում են և մուգիկայի վարժապետ: Այս տեսակ կրթութիւն ստացած աղջիկը, թէ և այնքան ինքնակամ չէ լինում, որ իր համար փեսայ ընտրել, և պատկանում է ծնողների համաձայնութեամբ, բայց միշտ լաւ կին է լինում: Նրանք

Թերեցարան բանալ, որը միշտ մատչելի և բաց լինի ժողովրդի բոլոր դասերի համար և որի ջանքը լինի գլխաւորապէս գործակատար, արուեստաւոր և մշակ դասին ընթերցասիրութեան ընտելացնել, ինքնակրթութեան և բարոյական միջոցարութեան միջոց տալ: Ընթերցարանի մօտը չունենորների համար ձրի լինի և նորա դեկավարութիւնը պէտք է յանձնել այնպիսի անձին, որը ընդունակութիւն, յարմարութիւն և եռանդ ունենայ իր բոլոր գործունէութիւնը երկար ժամանակ նորա առաջադիմութեանը նուիրելու:

Բ) Պէտք է կիրականորեայ և գիշերվայ դասեր ստանանել և յայտարարել, որ ցանկացողները զընան և գրագիտութիւն սովորեն, իսկ թերութեանը կատարելագործվեն օրստօրէ. ունեցողներից կարելի է չափաւոր վճարք առնել իսկ չբաւարանալին ձրիապէս ամենին: Հաւատացած եմ, որ փողոցները, փողները թափվածներ, գիշերաշրջիկներ և ծակամուտները մեծ ուրախութեամբ կայցնեն այսպիսի դասերին և ցանկալի օգուտը կը բաղեն:

Գ) Լաւ կը լինէր, որ «Մարդասիրական ընկերութիւնը» իր մի քանի անդամներից մասնաժողով կազմէր, որի պարտաւորութիւնը լինէր պարապ և յուսահատած հայերի համար գործ գտնել, արդար աշխատանքով ապրուստ ձարելու, անչափահասներին բարեկյուս տեղերում և արուեստագործների մօտ ծառայութեան և աշակերտութեան տալ, և առանց զօրաւոր պատճառի եկածներին յորդորանքով և այլ միջոցներով տուն յետ դարձնել, որը մեծ բարեբարութիւն կը լինի նրանց համար:

Դ) Հարկաւոր է հասկացնել օտարականներին, որ իրանց յետ ձգած փոքրիկ գումարները կարող են տեղիս պետական բանկի բաժնու (ուր խնայողութեան սնտուկ կայ) ապահովութեամբ դնելու և ուղած ժամանակը յետ ստանալ. իսկ եթէ սա գիտաւորին և անմատչելի թուի նրանց, որ աւելի հաւանական է մի քանի պատճառներով, միթէ չէ կարելի այստեղ մի Պահարկ չհիմնել և եկեղեցական ծանուցումներով ու այլ միջոցներով բացատրելով նորա նշանակութիւնը, հրաւիրել ժողովուրդին իրանց խնայած կօպէկները տանել և դնելու այնտեղ: Ամենին տարակարգ չեմ, որ պահարկը կարճ ժամանակի ընթացքում յաջողութիւն կը ստանայ, կարողանայ հասարակաց սրտում և մեծամեծ օգուտներ կը բերէ:

Ե) Պէտք է պարտաւորել քահանաներին, որ տուն և կիրակի օրերը իրանց կարողութեան չափով քարոզեն եկեղեցիներում, Աստուծոյ ըմբ պարզեցն ժողովուրդին և նրան միջոցաւ հոգևորապէս. իսկ այսուհետ մշակ քահանայքը չաւելացնել եկեղեցիներում, այլ ամենայն հնարներով աշխատել և մի խելքը-գլխին քարոզել քահանայ ունենալ, որի գլխաւոր պարտաւորութիւնը լինի միշտ քարոզել համեմատ ժամանակի ուղուն և պահանջին և առաջնորդել իր հօտին դէպի լոյս:

Թիֆլիսի հարուստ դասի մէջ կնոջ ծերութիւնը այնքան ցաւալի չէ լինում: Պատաւի տարիների հետ մոռացվում է և նրա անցեալը. նա դառնում է աւելի բարեպաշտ և սկսում է յաճախել եկեղեցիները: Տան մէջ նրա վրա նախաձեռնում են, որպէս մի հին կարասի վրա, որը երկար ծառայելով, մի տեսակ նուիրականութիւն էր ստացել, որին թէ և չեն կամենում դէն զըցել, բայց չեն էլ ցանկանում, որ շատ աչքի երևար: Նրան պահում են ուղայն մի հնուրդ: Ցանկալի մահը օգնութեան է հասնում պառաւիր: Դատարկ կենսից նա անցնում է դէպի գերեզմանի դատարկութիւնը: Որդիները նրա թաղումը կատարում են հանդեսով և մօտ աղքատները սկս են հազում:

(Սը. Զարուհի)

և ճշմարտութիւնն: Կատարեալ քանակն նա է, ով եկեղեցում և տանը քարոզում է անդադար, մտնում է ժողովրդի մէջ և պատուով նորա բարոյական վերքերը: Թէ չէ՝ ժամ ասելու, կըքելու և թաղելու համար հասարակ գրագէտ քահանայ եղաւ թէ նրանց մի քիչ աւելի խմացողը մի և նոյն է: Իմ կարծիքով, և նրանց մէջ մեծ զանազանութիւն չը կայ գրեթէ:

Այս ճինք կարեւոր առաջարկութիւնները հեշտութեամբ գլուխ կը գտնուի «Մարգարէ» Ընկերութիւնը՝ բարեհաճէ ուշք դարձնել սրանց վրա և լուրջ քննութեան ենթարկել: հասարակութեան բոլոր առաջնորդները և բանիմացները նորա անդամներն են: Եկեղեցիներէ բարեկարգելը, որի գործը ազդեցութիւնից շատ բան կախված է, նորա խորհուրդի անդամն է: Նա յարմար չէճը, հեղինակութիւն, ընդունակութիւն և մի խոսքով սրանց իրազեկելու համար ամեն հիւսիսական և բարոյական միջոցներ ունի: Ինչպէս Յոյս ունենք այժմեան խորհուրդի մարգարէութեան վրա, որ նորա ջնքով շուտով պըտակված տեսնենք մեր ցանկութիւնը:

Կասպիացի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍԻ» ԹՂՈՒԿՅՈՒԹԻՒՆԸ

Տէրսիմի լեւոյ բնակող քուրդներուն մէկ մասը հին Մարաց ցեղէն է Պարսկաստանէն եկած, միւս մասը Հայութենէ քրքացած է: Ասոնք ցեղերու բաժնուած են, ցեղապետները՝ պէյ և աղայ՝ ժողովրդին բացարձակ տէրերն են: Ժողովրդին բոլոր վաստակը աղաներուն կը վերաբերի, ասոնք պատերազմ հրատարակելու և խաղաղութիւն ընելու արտօնութիւն ունին: Կրօնապետները տէր են և սէյիտ կանուանին: Կրօնապետաց համար ամեն դուռ բաց է, իրենց կամքը ուզած ձի, ջորի, գոյք և այլն կառնեն ժողովրդէն այսինքն իրենց ծուխերէն, ժողովուրդը աղքատ, չափաւոր և աղէտ է: սէյիտին ու աղային խօսքերն իրենց համար պատգամի պէս է: Կրօնքին յայտնի բան մը չէ, իբր թէ Հաղ-րէթի Ալին իրենց պատուէր տուած է գաղանի պահել օտար ազգերէ: Աղօթարան չունին, ուրբաթ երեկոյները կը ժողովն մեծ տուն մը արք և կանայք, սէյիտները կըսկօն տխուր եղանակաւ մը ոտանաւորի ձեւերով բաներ խօսել և Ղարաթիւզէն կուշուած նուագ մը երգել: Կերպ կերպ պատուէրներ կուտան օտարներէ զոյշ ըլլալու, և իրարու համար իրենց ազգին համար՝ երբէք խնայողութիւն ու խորութիւն չունին: Ժողովուրդը կուշայ, զոյք զոյք նստած իրենց մուսայի պներուն այսինքն բարեկամաց հետ: Ներս մտած ատենին ամեն կին պիտի երթայ այրի մը ետեւ նստի և անոր քղանջքէն բռնէ իբր իրեն եղբայր և հաւատարմի Այս արարողութիւնը 6 ժամ կը տևէ, և ժողովուրդն ամենայն ջերմեան-դութեամբ լացով և կոծով ունկնդիր կըլլան: Տարին մէկ անգամ՝ 12 տարին լրացնող այր և կին պարաւոր են խոստովանել Սէյիտին իրենց բոլոր մեղքերը, նա ալ ըստ մեղաց ապաշխարութիւն կը վճռէ: Մարդ մեղքները մեղք չի համարուիր եթէ վասն ազգութեան ըլլայ: Իրենց մեծերուն ուսերը, կուրծքերն ու ծունկերը կը համբուրեն ի անտութեան, երբեմն ուքերուն տակի գետինը: Իրանց կիները, հարսերը և աղջիկներն երբէք չեն պահուիր, և հիւր մը եկած ատեն անոնք կը ծառայեն: Նաև հայերուն հետ ալ այսպէս կը վարուին: Իսկ օտար ազգացմէ սատակ կը պահուին, այնպէս որ՝ եթէ գիւղ մը ոստիկան մը կամ այլ տաճիկ մը գտնուի, կիները փողոց անգամ չեն հնչեր, սատակ հակադրութիւն ունին Բայամաց դէմ: Իրենք միայն Հազրէթի Ալին կը դաւանեն: քանի մը ուխտատեղիներ ունին, նաև փայտէ մատուցներ ունին իբր գրախօսի ծա-

ռէն իրենց տրուած: Նորադանդները հոգե-փոխութիւն կը դաւանին: շատերուն տուններուն մէջ կով մը, ոչխար մը, գառ մը, ձի մը կապած կը սնուցանեն՝ երբէք չը բանջնելով, և իրենց մեռած հայրը, եղբայրը, որդին է կըսեն, զոր իբր թէ իրենց կը ծանշին որ մեռնելէն վերջը հոգին անոնց գացեր է: Ասիտ մը իր այսպէս պահած ձիուն վեղը կը շփէր և երբ ձին իրեն կը քուէր ու կը խաղար, ահաւասիկ տեսնել, կըսէր ինձի, որ եղբայրս դեռ կը ծանշէ: Սէյիտներէն ոմանք էվլատի րէսուլ (որդի առաջնորդ) կը կոչուին և ունին հին պէրաթներ ու Ֆէրմաններ Օսմանեան նախնի կայսերաց և մանաւանդ Սուլթան Մուրատ Բ-ի ժամանակէն: Հին տումարին յունուար 1-ին օրը խոնք մը կը շինեն կեփեն և կը բաժնեն նախնի կազէն թ (կաղանդի հաց) բոլորով: Ասոնք Հայերէն աւելի հսկայ, աւելի, ուժեղ և գեղեցիկ են: Հայերէն քիչ կաշատին և իրենց բոլոր զգեստը և տան պիտոյքները Հայերէն կանուան: Եկեղեցիներու, վանքերու, նաև աւոնց աւերակաց մեծ յարգանք կընծայեն, այնպէս որ քուրդ մը տեսնուած չէ որ աւերակ եկեղեցւոյ մը առջեւ անցած ատեն առանց երկիր խոնարհելու անցնի: (ամեն գիւղերու և լեռներու մէջ շատ մը հին եկեղեցեաց աւերակներ կան): Բարեկամութիւնն ինչ ու թշնամութիւնն ինչ 300 տարի կը շարունակէ: Մարդ մը մեռնողն եթէ անոր ժառանգներուն հետ հաշտութիւն չունի, պարտաւոր է տալ 2000 զըշ, զարկած հրացանը, թուր մը, որով արեան գինը վճարեալ կը համարուի, և կըլան Քիլայ: Ցեղերու մէջ կռիւ եղած ատեն երկու կողմանց ալ Աղաները վարեն մեռնելն արգելեալ է, այլ միայն ժողովուրդը պէտք է մեռնի: Ունին ուրիշ շատ մը սովորութիւններ ու աւանդութիւններ, զորս յատուկ տեսակաւ մը ծանուցանելու մտադիր եմ: հանդերձ շատ մը տեղեկութիւններով, զորս հիմայ գրելու արդիւք ունիմ:

Քիչ մ'ալ Խարբերդի վրա խօսիմք, ուր 40 օրերէ հետէ կը գտնուի խարբերդի աւանդը ոմանք կըսեն Քարբերդ, որ քաղաքին բերդէն առնուած կըրէի: Իսկ ոմանք կըսեն Քար. փութ, որ ըսել է (կուռք իշոյ), իբր թէ կուռքաշտութեան ատեն իշու մը արձանը կը գտնուի եղբ հոն, բայց ասոր վերայ պատմութեանց մէջ յիշատակութիւն մը միտքս չիգար: և որովհետեւ Քար. բերդ Հայերէն, իսկ Քար. փութ Պարսկերէն է, հոս Պարսկաստան չըլլալուն նայելով՝ Քար. բերդն աւելի հաւանական կը թուի ինձ: Այս գաւառը 62 հայրենակ գիւղ ունի և հանգերձ քաղաքով 64,000 հայ բնակիչ: Հողը խիստ բերրի է, բամբակի և գինիի առատ բերք ունի, և ամեն կերպ ընդլայն և պտուղ կը բուսնի, ընտիր տեսակներով ժողովուրդը կըրօնի և ազգութեան քիչ մը աւելի անտարբեր է գրացի գաւառացի հետ բազմաթիւ: Քաղաքին մէջ 120 տուն ասորի կը գտնուի, որոց ընդուն ու կրօնական արարողութիւնքն Հայերէն են: Բայց քանի մը մասերու մէջ Հռոմէականութիւն մտած է: Հայոց հետ խնամութիւն կըսեն անխորի: Բողոքականներն ալ Հայոց և Ասորաց հետ միշտ աղջիկ կառնեն կուտան, իսկ այս երեք հասարակութիւնք պապականաց հետ երբէք խնամութիւն չեն ընել:

Սմբատեան ընկերութեան դպրոցէն դատ դպրոց չը կայ գոյութեան արժանի: Աղջկանց վարժարան մը չը կայ: Այժմ նոր ըսկու թէ հին ընկերութիւնները բարեկարգել և թէ նոր նոր ընկերութիւններ կազմուի յանուն վարժարանաց: Մէզրէ, որ կառավարութեան կեդրոնն է, և ուր հարուստ ազգային կը բնակին, երկու հին ընկերութիւնք միանալով՝ նոր ընկերութիւն մը կազմեցին Արարատեան անուամբ, և անմիջապէս

աղջկանց վարժարան մը բանալու ձեռնարկեցին: շուկային մէջ ընթերցարան մը ունենալով՝ ամեն կերպ լրագիրներ բերելու որոշում ըրին և գործադրութեան սկսան: Հիւսէյնի գիւղի Հայկեան ընկերութիւնը նորագեցին: դեռ ևս շատ մը գիւղեր ընկերութիւններ կազմելու և դպրոցներ բանալու խորհուրդի մէջ են: ասոր երկինք որ յաջողութիւն գտնեն: Սմբատեան ընկերութիւնն աղջկանց համար վարժարան մը բացու և մեծ պահոյ մէջ պիտի ժողովէ ցրուեալ օրերորդները: Յառաջիկայ հինգշաբթի օրը Արարատեան ընկերացումը պիտի կատարեն վայելուչ կերպով:

Տիգրանակերտ, ուր 2200 հայու տուն կայ, դեռ աղջկանց վարժարան մը չունին: Հոն ալ երեք ընկերութիւնք կազմուած են, տեսնենք ինչ արդիւք պիտի տան: Ամօթ է իրանց իթէ չը յաջողին: վասն գիւղերութեան հարստութիւն ունեցողներ ալ շատ կան: Ծիշլը խօսելով այս կողմերու բոլոր Հայ ժողովուրդն յանուն ազգութեան ստակ տալու վարժ են, իսկ գործելու անտարբեր: Ամբողջ Խարբերդի մէջ երկու թերթ՝ «Մասիս», մէկ «Թէրքէման», երկու «Ոյստ», մէկ «Փոնը», մէկ «Հայրենիք», մէկ «Լրագիր» կուգայ, զորս ձեռք ձեռք քաղանք ու գիւղերը կը պարտաւորեն: Այս տողերը չեմ կրնար առանց վշտի գրել: Բայց ճիշդը խօսելու պարտաւոր եմ: Հարուստ ազգայինք իրանց հաճոյցի համար մեծամեծ ծախսեր կընեն, բայց փողը գումար մը կը խնայեն լրագրի, գրքի, և դպրոցի և այլոց համար: Սակայն անոնք ալ շատ մեղաւոր չեն, քանի որ գործող չը կայ, համազօր չը կայ: Երեք բնիկ վարդապետաց վրայ արդէն գրած էի, վանքերուն եկամուտները կը կողպուին: վերջապէս ազգային գործերն անկերպարան վեճակի մը մէջ են: Տեղւոյ դատական ժողովին վրայ ժողովուրդը կը գանգատէր: այսօր նոր ընտրութեամբ հայազգի պատուաւորներէն Մեծ. Յարութիւն էֆ. Արիիւրեան և Մարտիրոս էֆ. Նազուկեան նոյն ժողովին, և Տիրատուր էֆ. Քարազեան վարչական ժողովին (խտարէի) անգամ ընտրուեցան: Բոլոր ժողովուրդը գոհ է այս նոր անդամներէն, իսկ ընտրութեան եղանակին վրայ բողոքներ պակաս չեն:

Հայցին հօխան 90 փարայ է: դարին 80 փարայ: բամբակը 22 զըշ: իւղը 40 զըշ: թղթաբամբ 400 զըշ: զըշ: Ամենալաւ գինիին հօխան 2 զըշ է: Պօղոյ գինիին վաճառականները, փոխանակ օտար տէրութեանց հոգերէ բերել ծախելու, լաւ կըլլայ որ տեղւոյ գինիին վրայ փորձ մը ընեն, գոնէ մեր երկրին բերքը ստակ ընէ, և գէթ ասով մեր գիւղացի եղբայրները գինին ծախելով շատ չը խմեն: որովհետեւ հոս հօխանց ամաններով կը խմեն, և Թօլը ըսուած չափ մը 1-էն մինչև 6 հօխայ կը պարունակէ, զոր մէկէն խմող կտրիճ կանուանեն:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԹԻՒՆ, 14 մարտի: Լուր կայ, որ յանձնաժողովը, կայսերական ծախսերը կը ծառայուց յետոյ, կարելի համարեց նահանգական վարչութիւններին խորհրդատուներին պաշտօնը ազատ թողնել: ինչպէս և բոլոր միւս պաշտօնատարներին, բացի նահանգական տանին փոխ-նահանգապետի և գործադարի պաշտօնները:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԹԻՒՆ, 15 մարտի: Կոմս Լօրիս-Միլեթով մարտի 14 Յարիցին վերադարձաւ: Աստուխանից դէպի Յարիցին տանող ճանապարհի վրա գտնված բոլոր գիւղերն ու բնակութիւնները բաւականապէս զրոյթեան մէջ են: այլ ևս նոր հիւսնդացողներ չը կան:

ՎԵՏԼԵՆԵՎԱ, 12 մարտի: «Полось» լրա-

գրին հեռագրում են որ մարտի 12-ին 22 տուն են այրել:

ԲԵԼՐՈՒՄ, 14/26 մարտի: Այն լուրը, թէ Միլեթովիչին Վիէնայում սերբիական դեսպանին նշանակելը չը հաստատուեցաւ:

ՏԱՇԿԵՆՏ, 14 մարտի: Կառավարան յայտնեց, որ աֆգանական հարցը, Խուսաստանի վերաբերութեամբ, վճռված է: Աֆգանիստանը բալորովն յանձնված է անգլիացիներին, որոնք կարող են վերցնել և իրանց սեփականացնել մինչև Հէրատ, առանց երկիւղ կրելու թէ ուսմանը կը միջաման:

ԼՕՆԴՈՆ, 15/27 մարտի: «Standart» լրագիրը հաղորդում է, որ Սուլթանը վճռել է մի մեծ պաշտօնատար ուղարկել Լիվադիա ուսուց Թագաւորի մօտ մի առանձին մօտրմական յանձնարարութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 15/27 մարտի: Այսօր վախճան վեցու թագաւորանոց իշխանի Վօլքսմար որդին: Կայսերական պարլամենտը միաձայն հաւանութեամբ ընդունեց Շնէգանսի այն ծրարագրը, որով նա առաջարկում էր, որ Ելզաս-Լօթարինգիայում անկախ կառավարութիւն ընին:

ԿԱԼԿԱՔԱ, 15/27 մարտի: Կալիֆանի յայտնեց Հնդկաստանի փոխարքային թէ Նակուր-խանի հետ սկսած բանագնացութիւնները յաջող ելք չունեցան: Անգլիական զօրքերին հրամայված է շուտով առաջ գնալ դէպի Կարուր:

ԸԱԳՈՒՋԱ, 16/28 մարտի: Ալէսիո հրամանատարը, Խայրար արդեն և 60 բնիկ նահաւոր քաղաքացիներ կաշանաւորված են, այն խռովութեան պատճառով, որ նրանք արին թիւրքաց կառավարութեան դէմ:

ՅԻԼԻՊՊՈԼ, 16/28 մարտի: Արեւելեան Բուլղարիայի Ֆինանսների կառավարիչ Տմիդը հրաժարման խնդիր տուեց: Այս պատճառով միջազգային յանձնաժողով վճռեց պաշտօնապէս յայտնել եւրոպական կարիքներին, թէ նա չէ կարող իրագործել Բերլինի դաշնագրի 19 յօդուածը:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԹԻՒՆ, 16 մարտի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 Կ., երկրորդ 96 ռ. 48 Կ., երրորդ 95 5/8 ռ., չորրորդ 95 7/8 ռ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 237 ռ. 25 Կ., երկրորդ 233 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսերը 93 ռ. 50 Կ., երկրորդ 93 5/8 ռ., ոսկի 8 ռ. 42 Կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 23 3/8 պէնս: Տրամադրութիւնը թող է:

ՆԵԱՊՈԼ, 16/24 մարտի: Կասաղիոնական ատենանք մերժեց Պասսանանտի այն բողոքը, որով նա խնդրում էր փոխել դատաւիճիկը:

ՄՕՍԿՎԱ, 17 մարտի: Մարտի 15-ին Բարոնիսկի անունով մի մարդու տանը երեկոյեան հացկերութիւն համար հրաւիրված հիւրերի թիւում գտնվում էր և մի 22 տարեկան երիտասարդ Բայաշէյսկի անունով երեկոյեան ժամը 9-ին դահլիճը մտաւ: մի 19 տարեկան աղջիկ, որի անունը Կաշկա էր և որը եկել էր Պետերբուրգից: Նա ընկալվելը արձակեց և Բայաշէյսկիուն տեղի ու տեղը սպանեց: Նա հրաժարվեց պատճառը բացատրելուց, ասելով որ նա նրան սպանեց որոշեալ դիտաւորութեամբ: Նրան կաշանաւորեցին:

ՏԱԳԱՆՐՕԳ, 17 մարտի: Ազովսկու առեւտրական բանկի ընդհանուր ժողովը վճռեց պակասեցնել ընկերութեան վճարի դրամագույնը, անցիտան 84 ռուբլ դարձնելով:

ՓԱՐԻՋ, 17/25 մարտի: Կ. Պօլսից հեռագրում են, որ Բ. Դուռը, ցանկանալով յուզմունքների ժամանակ ազատ լինել որ և է պատասխանատուութենից, համաձայնեց շուտով գրաւել արեւելեան Բուլղարիան:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԹԻՒՆ, 18 մարտի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Կայսրութեան մէջ պարտքերի մասին անձնական կաշանաւորութեան օրէնքը վերցվում է, բացի Բալտեան երկրներէն և Լեհաստանի թագաւորութեան նահանգներից: Լօրիս-Միլեթով կոմսը մարտի 16-ին Յարիցիից հեռագրում է, թէ մարտի 14-ին Սէլեարնօէ գիւղից վերցվեցաւ կարանիսական ամբուլ-թիւնը: Ընդհանուր ուղարկութիւն է: 500 մարդիկ զնացին դաշտային աշխատութեան: Օրովը զննեց ձկնորդ 50 ամբարներ, որոնք ամենքն էլ, բացի երեքից, ամենամաքուր դրութեան մէջ են գտնվում:

Խմբագիր — Հրատար. ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

